Հաստատված է Խաչատուր Աբովյանի
անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2012 թվականի
սեպտեմբերի 20-ի նիստում
Ռեկտոր՝ Ռուբեն Միրզախանյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի որակի ներքին ապահովման քաղաքականությունը

1. Նախաբան
2. ՀՊՄՀ-ում որակի ներքին ապահովման քաղաքականության նպատակը
3. ՀՊՄՀ-ում որակի ներքին ապահովման քաղաքականության խնդիրները
4. ՀՊՄՀ-ում որակի ներքին ապահովման քաղաքականության սկզբունքները և դրանց իրագործումը
5. Որակի ներքին ապահովման պատասխանատուները
6. Մշտադիտարկում

1. **Նախաբան**

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (ՀՊՄՀ) մանկավարժական կրթություն տրամադրող առաջատար բուհն է Հայաստանում: ՀՊՄՀ-ի առաքելությունը նպատակաուղղված է՝

- մանկավարժական մտքի ձևավորմանը, կրթության և սոցիալական ոլորտի ժամանակակից մանկավարժ մասնագետների պատրաստմանը,
- Համալսարանի ներուժի զարգացմանը, կրթական գործունեության արդյունավետության և կրթության ու գիտության որակի բարձրացման շնորհիվ՝ շրջանավարտների մրցունակության բարձրացմանը,
- ուսուցիչների վերապատրաստման բազային կենտրոնի առաջնորդող դերի ապահովմանը և Համալսարանի հետազոտական հնարավորությունների

զարգացմանը՝ աջակցելով ՀՀ կրթության համակարգի գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեությանը:

Մանկավարժական կրթության հիմնախնդիրն է ապահովել որակյալ և որակավորված մանկավարժների մասնագիտական պատրաստման բարձրորակ համակարգ և ուսումնական միջավայր, որը կստեղծի համապատասխան նախադրյալներ համակողմանի զարգացած, առաջանցիկ գիտելիք կրող մասնագետների պատրաստմանը՝ գիտելիքը ապագա սերունդներին փոխանցելու նպատակով:

ՀՊՄՀ-ն գիտահետազոտական բուհ է և կարևորում է որակի ապահովումը ուսումնական, հետազոտական և հաստատութենական (ինստիտուցիոնալ) բոլոր մակարդակներում:

ՀՊՄՀ-ն որակի ապահովման գործընթացներում և ընթացակարգերում առաջնորդվում է.

- «Կրթության մասին» ՀՀ օրենքով,
- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով,
- ՀՊՄՀ-ի զարգացման ռազմավարության սկզբունքներով,
- Որակի ապահովման եվրոպական և ազգային չափանիշներով և չափորոշիչներով,
- Նախորդ տարիներին կատարած աշխատանքների վերլուծության արդյունքներով:

Որակի քաղաքականությունը ՀՊՄՀ-ի նպատակների, խնդիրների, ինչպես նաև ռազմավարական սկզբունքների և արժեքների հռչակագիրն է կրթության որակի բնագավառում: Կրթության որակի ապահովումը ՀՊՄՀ-ի ծրագրային առաջնայնությունների օրակարգում է, որը մանկավարժական կրթության զարգացման և անհրաժեշտ գիտելիքների ստեղծման, փոխանցման և տարածման հիմնասյուներից է:

2. ՀՊՄՀ-ում որակի ներքին ապահովման քաղաքականության նպատակը

ՀՊՄՀ-ում որակի ներքին ապահովման սույն քաղաքականության նպատակն է սահմանել Համալսարանում կրթության որակի ապահովման սկզբունքները, մոտեցումները և ուղղությունները:

3. ՀՊՄՀ-ում որակի ներքին ապահովման քաղաքականության խնդիրները

ՀՊՄՀ-ում որակի ներքին ապահովման քաղաքականության խնդիրներն են՝

- տրամադրել հրահանգավորումներ ՀՊՄՀ-ի վարչական անձնակազմին և կառուցվածքային ստորաբաժանումների շահագրգիռ ներկայացուցիչներին՝ որակի ներքին ապահովման ընթացակարգերի մշակման և ներդրման նպատակով,
- տրամադրել հրահանգավորումներ՝ միջազգային չափանիշներին համապատասխան որակի ներբուհական ապահովման չափանիշների մշակման նպատակով,
- ապահովել որակի մշակույթի ստեղծման նախադրյալներ,
- պահպանելով մանկավարժական կրթության բնագավառում առկա ձեռքբերումները, ազգային առանձնահատկությունները, հիմնարար գիտելիքը՝ իրականացնել պետության, հասարակության և անհատի՝ տվյալ ժամանակահատվածին համահունչբարձրորակ կրթություն՝ բարձրագույն մասնագիտական կրթության բոլոր երեք մակարդակներում,
- կրթության որակի ապահովման ճկուն ընթացակարգերի և մեխանիզմների միջոցով ապահովել ՀՊՄՀ-ի ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին և բարձրացնել Համալսարանի գրավչությունը,
- նպաստել և խթանել հետազոտության ինտեգրումը դասավանդման և ուսուցման գործընթացներում, ապահովել դրանցում ուսանողների ներգրավվածությունը,
- նպաստել և խթանել որակի շարունակական բարելավման մշակույթի ներդրումը,
- մշակել չափանիշներ նմանատիպ կրթական ծրագրեր իրագործող համալսարանների հետ՝ համեմատությունների իրականացմանն լավագույն փորձի տարածման նպատակով:

4. ՀՊՄՀ-ում որակի ներքին ապահովման քաղաքականության սկզբունքները և դրանց իրագործումը

ՀՊՄՀ-ն որակի ապահովման իր գործընթացներում առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

– **Նպատակային.** ՀՊՄՀ-ում բոլոր գործընթացները և աշխատանքները իրականացվում են՝ հիմք ընդունելով ՀՊՄՀ-ի առաքելությունը և ռազմավարությունը:

– **Շարունակական փոխակերպմանը արձագանքող**. ՀՊՄՀ–ն խթանում է պրոֆեսորադասախոսական և վարչական համակազմի մասնագիտական որակավորումների և կարողությունների աճը՝մանկավարժության բնագավառում շարունակական փոխակերպումներին արձագանքելու և դրանք կառավարելու նպատակով:

– **Ուսումնական և կառավարման գործընթացների բարելավմանը միտված**. ՀՊՄՀ-ում որակի ապահովման համակարգը, ընթացակարգերը և գործընթացները պետք է ուղղված լինեն մանկավարժության բնագավառում ուսումնական և հետազոտական գործընթացների կազմակերպման, դրանց բովանդակության, ինչպես նաև ուսանողներին տրամադրվող ծառայությունների և կառավարման համակարգի թերացումների շտկմանը, դրանց որակի խթանմանը և բարելավմանը:

– **Փաստերի վրա հիմնված.** որակի ապահովման գործընթացների ապահովման և բարելավման նպատակով դրանք պետք է հիմնված լինեն իրական փաստերի վրա տեղեկատվական նոր տեխնոլոգիաներով գործառական տվյալների հավաքման և վերլուծման միջոցով;

– **Խթան հանդիսանալ հետազոտության ինտեգրմանը, դասավանդման և ուսուցման գործընթացին**. ՀՊՄՀ-ի պրոֆեսորադասախոսական համակազմը, համագործակցելով ՀՊՄՀ-ի ուսանողների հետ որպես գիտատար գիտելիք կառուցող և զարգացնող հասարակություն, հետադարձ կապի շնորհիվ՝ պետք է ապահովի հետազոտության ինտեգրումը դասավանդման և ուսուցառման գործընթացին, խթանի հետազոտական ուսուցումը;

– **Հստակ ձևակերպված**. Որակի ապահովման խնդիրները, ինչպես նաև դրանց հասնելու ուղիները, ընթացակարգերը և միջոցները պետք է ձևակերպված լինեն հստակ, շոշափելի, իրագործելի տվյալ աշխատանքների համար նախատեսված խելամիտ ժամկետներում:

– **Թիմային մոտեցում**. ՀՊՄՀ-ում որակի ապահովման համակարգը,ընթացակարգերը, մեխանիզմները պետք է հասանելի լինեն ՀՊՄՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների շահագրգիռ ներկայացուցիչների դիտարկմանը, ուսումնասիրմանը և հետադարձ կապի ապահովմանը, որը կստեղծի ՀՊՄՀ-ում որակի ապահովման նկատմամբ գործընկերային և թիմային մոտեցման մթնոլորտ:

ՀՊՄՀ-ն իր ռազմավարությամբ և առաքելությամբ սահմանված ուղենիշները, այդ թվում՝ որակի ապահովման համակարգի ներդրման հետ կապված վերոնշյալ նպատակները և սկզբունքներն իրագործելու համար պետք է.

– Կատարի պարբերական մշտադիտարկում, ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ տրամադրելով փաստագրված տեղեկատվություն ՀՊՄՀ-ում կրթության, հետազոտության և ուսանողներին տրամադրվող ծառայությունների բարելավման համար:

– Փաստարկված տեղեկատվությունը և վերլուծությունները պետք է մատնանշեն ՀՊՄՀ-ի թերացումները տարբեր մակարդակներում և լավագույն փորձը, որը կընդգրկվի և հիմք կհանդիսանա Համալսարանի տարեկան ծրագրում՝ դրանց բարելավմանն ուղղված միջոցառումների ցանկում ընդգրկելու համար:

– Իրականացնի հստակ ուղղորդված միջոցառումներ՝ ՀՊՄՀ-ում որակի մշակույթի ձևավորման համար: Մասնավորապես, ստեղծի բարենպաստ միջավայր բուհի վարչակազմի, պրոֆեսորադասախոսական համակազմի և ուսանողների մասնագիտական զարգացման, դասավանդման և ուսուցման նորագույն հմտությունների և գիտելիքների ձեռք բերման համար:

– Ստեղծի կառավարման և հաշվետվողականության թափանցիկ համակարգ, որտեղ ուսանողները, դասախոսները և վարչակազմը իրենց մասնագիտական տիրույթում մասնակցեն որակի ապահովման գործընթացներին և կարծիքներ և

առաջարկություններ տրամադրեն՝ որակի ընթացակարգերի և գործընթացների բարելավման նպատակով:

– Ծառայեցնի կառուցվածքային ստորաբաժանումները և ռեսուրսները որակի ապահովման գործընթացների անխոչընդոտ իրագործմանը և համակարգի բարելավմանը:

5. Որակի ներքին ապահովման պատասխանատուները[1]

Որակի ներքին ապահովումը գտնվում է ՀՊՄՀ-ի պրոֆեսորադասախոսական և վարչական համակազմի յուրաքանչյուր անդամի պատասխանատվության շրջանակներում և հանդիսանում է նրանց առօրյա գործունեության անբաժանելի մասը: Ստորև ներկայացված է ՈԱ-ի ներքին կառավարման համակարգը:

–**ՀՊՄՀ ռեկտոր.** պատասխանատու է համահամալսարանական որակի ապահովման քաղաքականության իրագործման համար:

– **ԲՄԿ-ի որակի ապահովման համակարգի ՀՊՄՀ-ի գիտական խորհրդին կից գործող ՈԱ-ի ներկայացուցչական հանձնաժողով**. պատասխանատու է ՈԱ-ի քաղաքականության և հայեցակարգի բարելավմանն ուղղված առաջարկների ուսումնասիրության, կանոնակարգային, ընթացակարգային, չափորոշիչ- փաստաթղթերի և կրթական ծրագրերի վերանայման և ներդրման քննարկման ու գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար:

– **Կրթության զարգացման և որակի ապահովման վարչությունը** պատասխանատու է ՈԱ-ի քաղաքականության և հայեցակարգի իրագործման, ՈԱ-ի գործընթացների, մշտադիտարկման, վերանայման և բարելավման համար: Վարչությունը համագործակցում է ֆակուլտետային ՈԱ-ի պատասխանատուի, ՀՊՄՀ-ում ՈԱ-ի հանձնաժողովի և ֆակուլտետների/ամբիոնների հանձնաժողովների հետ:

[1] Պատասխանատվությունների և գործառույթների մանրամասները տե՛ս «ՀՊՄՀ-ում ՈԱ-ի հայեցակարգ» փաստաթղթում:

– **ՈԱ-ի վերլուծության և վիճակագրության բաժինը** պատասխանատու է ՀՊՄՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներից տվյալների, ինքնագնահատման հաշվետվությունների հավաքման և վերլուծության համար: ՈԱ-ի վերլուծության և վիճակագրության բաժինը վերլուծված տեղեկատվությունը փոխանցում է Կրթության զարգացման և որակի ապահովման վարչությանը՝ ռազմավարական խնդիրների ձևակերպման և ՀՊՄՀ-ում ՈԱ-ի հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

– **ՀՊՄՀ-ում ֆակուլտետների/ամբիոնների որակի կառավարման հանձնաժողովները** պատասխանատու են ֆակուլտետում/ամբիոններում ուսուցման որակի և գործող ծրագրերի վերահսկման ու մշտադիտարկման, նոր ուսումնական ծրագրերի քննարկման, ՀՊՄՀ-ի որդեգրած մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողության համար: ՀՊՄՀ-ում ֆակուլտետների/ամբիոնների որակի կառավարման հանձնաժողովները կարող են, ըստ անհրաժեշտության, ստեղծել ենթահանձնաժողովներ՝ մասնագիտական տարբեր տիրույթներում խնդիրների քննարկման, առաջարկությունների ներկայացման, ինչպես նաև անհրաժեշտ ընթացակարգերի և կանոնակարգերի մշակման ու բարելավման համար:

– **Ամբիոնային ՈԱ-ի պատասխանատուն** պատասխանատու է ֆակուլտետի մակարդակով որակի ապահովման և վերահսկման գործառույթների իրականացման և ամբիոնից բխող նոր ուսումնական ծրագրի ներդրման գործընթացի կազմակերպման համար, համագործակցում է ՀՊՄՀ-ի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝ տվյալների հավաքման և փոխանցման նպատակով:

– **Նպատակային հանձնախմբեր.** պատասխանատու են ուսումնական ծրագրերի մասնագրերի (կոնսպեկտների), պլանների, կրթական վերջնարդյունքների, անհրաժեշտ ընթացակարգերի, կանոնակարգերի մշակման, վերանայման և կատարելագործման համար: Նպատակային հանձնաժողովները կազմվում են ֆակուլտետային հանձնաժողովի կողմից:

6. Մշտադիտարկում

Կրթության զարգացման և ապահովման վարչությունը պատասխանատու է ՀՊՄՀ-ում որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի և գործընթացների իրագործման վերահսկողության և մշտադիտարկման համար: Այդ նպատակով ՀՊՄՀ-ն համապատասխան համակարգի, գործընթացների և մեխանիզմների միջոցով կապահովի ներքին և արտաքին հետադարձ կապը:

Կրթական գործընթացների կազմակերպումը, ինչպես նաև հաստատութենական (ինստիտուցիոնալ) տարբեր մակարդակներում կառավարման գործընթացները մշտադիտարկվում են ուսումնական տարվա ողջ ընթացքում՝ համապատասխան գործիքակազմի միջոցով: Մշտադիտարկման և վերահսկման նպատակով տեղեկատվության հավաքման և մշակման համար Կրթության զարգացման և որակի ապահովման վարչությունը համագործակցում է ՀՊՄՀ-ի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների հետ: Արդյունքներն ամփոփվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին և մշակվում համապատասխան երաշխավորություններ, առաջարկություններ և միջոցառումներ՝ թերությունները շտկելու, իսկ լավագույն փորձը՝ տարածելու նպատակով: